ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սարգիս Արամի Միրզոյանս, Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության անձնակազմի կառավարման բաժնում, որպես փորձագետ 2024 թվականի հունիսի 10-ից 2024 թվականի դեկտեմբերի 10-ն ընկած հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. Մշակել և կազմել եմ անձնակազմի կառավարման ոլորտում Ծառայության ղեկավարի և Ծառայության գլխավոր քարտուղարի հրամանների նախագծերը և դրանք ներկայացրել ստորագրման, ինչպես նաև իրականացրել եմ ստորագրված հրամանների հաշվառման և համապատասխան աշխատողներին տեղեկացնելու աշխատանքները.
2. Իրականացրել եմ Ծառայության ղեկավարի և Ծառայության գլխավոր քարտուղարի կողմից նշանակվող անձանց ինչպես նաև Ծառայությունում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձանց անձնական գործերի վարման աշխատանքները.
3. Իրականացրել եմ Ծառայության աշխատողների աշխատանքային ստաժի հաշվարկման աշխատանքները.
4. Իրականացրել եմ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու դեպքում քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի վարման աշխատանքները.
5. Իրականացրել եմ Ծառայությունում աշխատանքային, այդ թվում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրերի և համաձայնագրերի կնքման հետ կապված աշխատանքները.
6. Իրականացրել եմ Ծառայության աշխատակիցների արձակուրդների ժամանակացույցի կազմման աշխատանքները.
7. Իրականացրել եմ Ծառայության աշխատողներին գործուղման վկայականների տրամադրման աշխատանքները.
8. Իրականացրել եմ Ծառայության աշխատողների ծառայողական վկայականների տվյալների տրամադրման և գրանցամատյանում հաշվառման աշխատանքները.
9. Իրականացրել եմ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում Ծառայության քաղաքացիական ծառայողների գրանցամատյանային տվյալների վարման աշխատանքները.
10. Իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին (այսուհետ՝ Գրասենյակ) քաղաքացիական ծառայության մասով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման աշխատանքները.
11. Իրականացրել եմ Ծառայության քաղաքացիական ծառայողների կողմից կատարված աշխատանքների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված կատարողականների կամ կիսամյակային հաշվետվությունների հաշվառում:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ՍԱՐԳԻՍ ՄԻՐԶՈՅԱՆ**

12 դեկտեմբերի 2024թ.